

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ բացւած լինելով, խնդրում ենք ցանկացողներին՝ շտապեն բաժանորդ գրել որքան կարելի է շուտ: Այս անգամ ես ուղարկում ենք ամենքին բաժանորդագրական ծրարներ:

ԳԵՈՐԳ ԵՊ. ՍՈՒՐԵՆՆԱՆՑԻՆ ՎԵՆԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ նշանակած է կառավարիչ վրաստանի և խմբեթիակի հալոց թեմի մինչև նորա հաստատուելը իբր նոյն թեմի առաջնորդ:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊ. ԱՂԻԱՆՆԱՆՑ, անդամ սինոդի, ՎԵՆ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հրամանով ճանապարհել է պարսից Ատրպատականի թեմը Սահակ վ. Ալվատեանի հետ:

ՎԶՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ պատուել է պ. Բարսեղ Թամազեանին, հրաւիրելով նորան ս. Էջմիածին՝ Վեհափառի գիւղատնտեսական ձեռնարկութիւնների և վանական կալածների կառավարութեան վերաբերեալ խնդիրների մասին կարծիք ցայտելու Պրն. Բ. Թամազեանը մէկն է մեր երկրի կրթած գիւղատնտեսներից. աւարտել է Ներսիսեան դպրանոցը 60-ական թւականներին, ուղարկւել է Ներս. դպր. հոգաբարձութեան կողմից Գերմանիա՝ իբր որդեգիր Էֆենդեանցի—բարձրագոյն գիւղատնտեսութիւն ուսանելու Հայրենիք վերադառնալու ժամանակից ի վեր նա մինչ օրս, երկու տասնեակ տարի շարունակ, նւիրած է գիւղատնտեսութեան գործին:

ՔՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ վերակազմւած է հետեւեալ կերպ. նախագահ՝ Խորէն Ժ. վարդ. Ստեփանէ, անդամներ՝ Լևոն վարդ. Խոջաւան, միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանց, ձեմարանի տեսչի օգնական Յովհաննէս Սաղաթէլեանց, ձեմարանի ուսուցիչ Եղիշէ Մաղաթեանց:

Այդ առիթով մենք հարկ ենք համարում լինչցնել որ, քննելով մեր ուսումնարանական կառավարութեան մէջ մոցնելիք բարեփոխութիւնների խնդիրը, դեռ ես անցեալ տարի («Մուրճ» 1892 թ. № 7—8 և 9, «Դպրոցական վարչական

րեֆորմ (օգուածը) մենք ալն եղրակացութեանն էինք եկել, որ մեզ հարկաւոր է ներկայ «Ուսումնական մասնաժողովի» աւելի կալուն մի հաստատութիւն, ալն է «Ուսումնական հոգաբարձութիւն», որի անդամները ընտրւած կը լինեն առնաւոր բոլոր թեմական դպրանոցների հոգաբարձութիւններից, նախագահութեամբ Վեհափառ Կաթողիկոսից նշանակւած մի անդամի:

ՔԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ 1893—1897 չորսամեակի համար ընտրւեց նոյեմբերի 7-ին պ. Պօղոս Իզմայլեան: Խորհրդարանի 80 հոգի անդամներից ներկայ էին 71 հոգի, որոնցից պ. Իզմայլեանին թերթիկներով առաջարկեցին 55 հոգի Վաղոնի քէշարկութեան ենթարկւեց միայն պ. Իզմայլեան, որ ստացաւ 62 սպիտակ և 8 սև ձայն, իսկ ինքը մնաց ձեռնպահ: Պր. Իզմայլեանը երիտասարդական հասակից ի վեր ծառայել է քաղաքին, նախ որպէս խորհրդարանի քարտուղար, ապա որպէս քաղաքալին վարչութեան անդամ և դորա հետ միասին՝ տեղապահ քաղաքագլխի: Նորա ծառայութեան միջոցին Թիֆլիսի քաղաքագլխները եղել են պ. Ալ. Մատինեան (12 տարի) և իշխ. Նիկ. Արդուլեան (2 տարի): Քաղաքալին նոր կանոնադրութեան գործադրութիւն ստանալուց լետու, ներկայ թւ. ամռանը, իշխան Աբդուլեանը հրաժարական տւեց, թողնելով սակալն ալնքան լաւ լիատակներ, որ խորհրդարանը բազմիցս թախանձեց նորից քէշարկել, բայց նախկին քաղաքագլխը հաստատ մնաց իւր հրաժարականի վրայ: Պրն. Իզմայլեանը, որ ամենագլխաւոր ուժն էր նախկին վարչութիւնների, վերջին քաղաքալին ընտրութիւնների ժամանակ ոգին էր «Դուրսովրէ նոմերա» կոչւած կուակցութեան, որ միակ չաղթող եղաւ ընդդէմ ալթմ գրեթէ ամբողջապէս ջախջախւած օպոզիցիայի:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ Մէջ կապացած է համաձայնութիւն, որի զօրութեամբ պարսկական հողից մի կտոր՝ Ֆերիւզէ (Խորասանի նահանգում) անցնում է Ռուսաստանին, որի վրիտարէն Ռուսաստանը գլխել է Պարսկաստանին Հիւսար և Աբաս-Աբաս կոչւած հողի կտորները: Այդ վրիտարիութիւնը կատարւած է Ռուսաստանի նախաձեռնութեամբ, միջոց տալու համար որ Անգր-կասպեան երկրի բնակիչները ամաբանոց գնան լիշակ Ֆերիւզէ տեղը: Ֆերիւզէն մի գիւղ է որ արտաստեղեր ունի Անգր-կասպեան երկրի բնակիչների համար շատ լարմար—Ռուսաստանից Պարսկաստան անցնող հողերից՝ Հիւսարը (хисаркнй угастокъ) Անգրկասպեան երկրումն է, իսկ Աբաս-Աբասեան

հողը Երևանեան նահանգի Սուրմալի գաւառումն է, Արաքս գետի աջ ափին: Երկուսն ևս անբնակ են և արօտատեղեր են: ԵՐԿՐԱՇԱՐԺ ԿՈՒՉԱՆ (կամ Ղուան) քաղաքում Նոյեմբերի 6-ին Պարսկաստանի Խորասան նահանգի Կուչան քաղաքում պատահեց մի սաստիկ երկրաշարժ, որից քաղաքի շէ մասը կործանեց: Նորագոյն տեղեկութիւնների համաձայն՝ մարդ փչացաւ աւելի քան 11,000 հոգի, խեղաթիււրած են 2,300 հոգի, անասուններ կոտորեցին մինչ 40,000 հատ: Երկրաշարժը շարունակեց կրկնել լաջորդ օրերը:

ՀՐԿԵՀ ԲԱԹՈՒՄԻ մէջ. — Նոյեմբերի 10-ին Բաթումը նորկայացրեց մի դժոխալին տեսարան: Կատարեւադէս ալուեցին հետեւալ կերօսինակին գործարանները և ամբարները՝ Աբրամովիչի, Բիխովսկիի Սէլադ Շահբաղեանի, Բալֆորուաի, Սիդիրիդիսի (Նախկին Անգեղիսի), Կրիսինի, Կազարովի և Շխեանցի:

ԲԱԼԱԽԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԷԺԱՆԱԳԻՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ վարութիւնը, խնդրելով մեզնից «Մուրճի» մի օրինակը նւէր ուղարկել ալդ ճաշարաններին կից գտնուող ընթերցարաններին, խնդրում է միաժամանակ «Մուրճ»-ում լայտնել ալդ հիմնարկութեան հասցէն, միջոց տալու համար ցանկացողներին՝ իրանց գրական գործերը նւէր ուղարկել բանտրների ընթերցարաններին: Հասցէն ալս է՝ Бахачавы. Дешевымъ столовымъ.

Ստորագրել են՝ լեռնալին-ինժեներ Աստածատուր Վահանց, բժ. Բ. Իւգրաշեանց, ինժ. Բ. Աղամեանց, լեռն.-ինժ. Բաստամեան և ուրիշներ:

«ԱՂԲԻԻՐ-ՏԱՐԱԶ» Թերթերը, որ անցեալ 1892 թ. նոյեմբերից, համաձայն ալդ Թերթերի արտօնատէր պ. Տիգրան Նազարեանցի հետ կապած մի պալմանի, վարում էին պ. պ. Գ. Միրզոյեան և Ստ. Լիւիցեան, ալժամ նորից անցնում են պ. Նազարեանցի կարգադրութեան ներքոյ: Ցաւալի է որ ալդ հանգամանքը կասկած է հրատարակութեան առժամանակեալ ընդհատման հետ: Սակայն բարոյական պարտք ենք համարում լայտնել, թէ որքան մենք տեղեակ ենք գործին, ալդ ընդհատումը մի խաղ չէ բաժանորդների հետ, ոչ պ. պ. Միրզոյեանի և Ստ. Լիւիցեանի և ոչ պ. Նազարեանի կողմից, ալ հետեանք է բարդ և ոլթերից վեր ծանր նւթական հանգամանքների: Յամենայն դէպս մենք կարծում ենք լաւ խորհուրդ տաւ լինել «Տարազ»-ի և «Աղբիւր»-ի բաժանորդներին, չորդորելով որ նոքա իրանց Թերահաւատութիւնը չհասցնեն ալն աստիճանի, որ խախտեն ալդ

թերթերի հիմքը: Մենք սրտանց կը ցականք եթէ «Ազգբւր»-ին, որը մեծ ծառայութիւն է մատուցել մինչ արժամ մեր մանուկ սերունդներին, որ և է վտանգ սպառնալ: Այդ առիթով մենք ստացանք Լոնդոնից մի նամակ պ. Տ. Նազարեանից, որով նա մեզ հաւատարացնում է թէ լուծարից նա ստանձնելու է իւր թերթերի ղեկավարութիւնը:

ԽՈՒՆԲԱՅԻ հատ-հատ դէպքեր ղեռ ևս շարունակում են պատահել Թիֆլիսում:

ԱՐՁԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆ. «Մշակ»-ի խմբագրութիւնը նւէրներ է ընդունում հանգուցեալ Դրիզոր Արծրունուն արձան կանգնեցնելու համար և նորա գրածները ընտրողաբար նոր հրատարակութեամբ լոյս ընծայելու համար:

ՆԻԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ Բազւի Մարդասիրական (Նիկերութիւնը ստացաւ նւէրներ .1) Ալբի տիկին Ն. Ռ. Պատուականեանից, իւր ամուսին հանգուցեալ վաճառական Պատուականեանցի կտակով՝ 20% թողած կարողութեան, աչն է 20,000 ռուբլի, որից կանխիկ ստացւած է ղեռ ևս 7000 ռուբլի:

2) Կրասնինիկեան եղբայրներից՝ 10,000 ռուբլի:

ԱՆՅԱՅՏ ԳՈՒՄԱՐ. «Մուրճի» խմբագրութիւնը սորանով լաւտարարում է որ սոն նոյեմբերի ամսի 8-ին ստացած է վստան (50) ռուբլի մի գումար, բայց դրամական ծրարի մէջ չկար նամակ և ոչ էլ փշատակութիւն թէ ում և կամ ինչու համար ուղարկւած է: Ծրարի վրայ կնքւած է Օդեսայի պոստատան գրոշմը, որպէս նաև այս կնիքը՝ Одесской главной конторы Русскаго Общества пароходства и торговли.

ՇԻՐՎԱՆՁԱԳԻԼԻ «ԱՐՍԷՆ ԳԻՄԱՔՍԵԱՆ» վէպը նուի է կազմում մի բանասիրականի, տպւած «Նովոյե Աբազրենիւն» ռուսաց լրագրում № 3418, ստորագրած Պ. Օ.՝ Ուրախ ենք, որ կարող ենք վկայել թէ լոյսածագիրը ճիշդ է ըմբռնել վէպի բնատրութիւնը և արժանիքը: Մենք արդ բանի վրա մանաւանդ աչն պատճառով չեւտում ենք, որ շատերին լալտնի է, թէ ինչ թէև խուլ մոմոնց բարձրացաւ, երբ արդ վէպը սկսեց տպւել «Մուրճ»-ում, և աչն էլ նոյն խակ մեզ մօտ չըջաննեիրում: Մենք լիապէս չնորհաւորում ենք հեղինակին արդարութեան աչն ձայների համար, որ ցարժմ լուել են պարբերական թերթերից՝ «Հայրենիք»-ից, «Տարազ»-ից, «Նովոյե Աբազրենիւն»-ից նորա «Արսէն Գիմաքսեան» վէպի համար:

ԱՆՄԵՂ ԳԻՍ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ: «Հայրենիք» լրագրում լատինի դե-
րասանապետ պ. Մնակեանը մի կարճ գրութիւն է տպել աշ-
բանի մասին, թէ հայերէնում որակը են գործածուած վ. ա. -
ձայնանշանները վ. հնչիւնի համար Բալց ալդ դասը տրուած է
աշբան միամիտ ձևով, իբր ալդ մասին ոչինչ լատինի չլինէր:
Մինչդեռ նորա ասածը հազար անգամ կրկնուած է և հազար ան-
գամ էլ հերքուած: Օրինակներ ըստ պ. Մնակեանի՝ «բաղաձայ-
նէ մը ետքը ա. կը դուրս ինչպէս պատճառուր, անհասնի» խոյ
եկեղեցու բարու և ալլն, ալդ մասին նա չի մտածում. և կամ
օրինակի համար ուսաց Мерв (Merv), քաղաքի անունը
ինչպէս պիտի գրէ պ. Մնակեան: Համաձայն իւր կանոնի նա
պիտի գրէր՝ Մեր՝ ա, չէ որ ական «բաղաձայն է մը ետքը կուգայ»:
Յետոյ «Չալնաւորէ մը վերջը - կուգայ, ասում է պ.
Մնակեան, ինչպէս ա. ար, ա. անի, հա. և ալլն»: Հապա որ
ալդպէս է, ինչու օտար բառերում կամ անուններում՝ ա. ի տեղ
վ տառն են գործ ածում նոքա, որոնք իբր թէ հաւանում են
ձեր տառ կանոնը. օրինակ ինչու գրում են ամիրալ Ավրան,
Էվելինա և ալլն:

Վ. տառի համար գրում է՝ «վ կը դուրս բառին սկիզբը և
« ձայնաւորէն չետոյ, օրինակ վարդ, կով, Բարդութեանց մէջ
ալ ալ գործածութիւնը կը պահուի, ինչպէս անվարժ և ալլն»:

Շատ լաւ. հապա որ ձեր կանոնը հաւանողները
գրում են վ նաև ոչ միայն բառի սկիզբում և ոչ միայն ուրից
չետոյ և ոչ էլ միայն բարդութեանց մէջ, ալ ինչպէս միայն
քէֆները կը տալ ? Յանուն որ կանոնի գրում են Սիլվեստր,
Ստրուպէ և ալլն, ուր վ տառը սկիզբում չէ, ուրից չետոյ չէ և ոչ
էլ բարդութեանց մէջ է: Էլ չխօսած ալն բանի մասին, որ մե-
ղանում կան գրողներ, որոնք արտատպում են ձեր կանոնները,
ուրիշներին խրատելու համար, որոնք սակայն իրանք ևն հեր-
քում ձեր կանոնը գրելով՝ տանձում, կը բերվի և ալլն, ուր վ
տառը նմանապէս ոչ սկիզբումն է, ոչ ուրից չետոյ է, ոչ էլ բար-
դութեանց մէջ է, բալց միայն իրանց ուղեղումն է իբր ցից
ընկած մեխ:

Ապալիտով եթէ ուղեհալու լինէք կանոններ ստեղծել բո-
լոր ալն դէպքերի համար, ուր (հարկաւ ոչ մենք ալ) ուրիշները
վ. ա. և ա. նշաններն են գործ ածում մի պարզ հնչիւնի համար,
ձեզ հարկաւոր կը լինի մի ամբողջ տրակտատ գրել: Եւ դժ-
բաղդութիւնը նրանումն է՝ որ ալդ տրակտատը ուսուցիչները
պարտաւոր կը լինեն մանուկների գլխում նստացիւն, որի հա-

մար ամիսներ կը հարկաւորեն, և զեռ պիտի պարծենան թէ արդիւնաւէտ գործով են զբաղուել. և, ի լրումն բոլորի, ալդ լիմար ժամավաճառութեան համար էլ պէտք է ժողովրդի գլուխները փող տրուի, ինչպէս ալ ինչ էլ տրուում է:

Դարաւոր բոլոր կանոնները մի կապէք ներկալ աշխարհաբառի վրին. և ձեր տաճ կանոնը նոր չէ, ամենքը գիտեն, բալց փորձը ցոյց է տալիս, որ ալդ կանոնին խիստ հետեւողներ ալ ինչ ան ան չկան. Դիտեն և չեն հետեւում. Ալ ևս ինչ անելի մեծ ապացոյց էք ուզում, որ ներկալ աշխարհաբառը, որպէս առհասարակ ներկալ անելի գործնական դարը, չի հաշտուում Գ-ի հնչիւնի համար հնարած սխալատիկական կանոնների հետ. Ամենքը խոս ևս տալիս ալդ կանոնից. բալց միայն ու ինչպէս կարողանում է. Մէկի կարողացածը ալն է, որ ստեղծում է մի նոր ուղղագրութիւն, որի մէջ պահպանւած է հնի ամբողջ բնուր (XVIII), ալսինքն երեք տառերը՝ Վ, Խ, Կ, բալց միայն առանց հնի արժանաւորութեան, որ կանոնաւորութեան մէջն էր կալանում. ալդպէս ևս վարւում «Մշակ», «Արձագանք», որոնք իրանց ստեղծած կանոնների համար մինոր սխալատիկական գիտականի ևս սպասում. իսկ միւսները անելի խեղացի ևս գտնում՝ բաւականաւ երկու տառով փոխանակ երեքի՝ գործածութիւնից հանելով և և թողնելով միայն Վ և Կ:

ՂԱԼԱԳԵԻ հրկիղեալների օգտին սկսած հանգանակութիւնները բաւականին լաջող արդիւնք տւեցին. Համագտմարը բոլոր նւիրատուութիւնների կը հաղորդենք, երբ Բաքու մասնաժողովը հալիւր կը հրատարակի:

ՎՐԱՑ ՀՈՒՆԻՈՐ ՈՅՄՐՆԱՐԻԱՑՈՒՄ, Թիֆլիսում, զեկտեմբերի 1-ից դասատուութիւնը դադարեցրած է և բոլոր աշակերտներն արձակւած ևս ցնոր կարողագրութիւն. Ալդ մասին Վրաստանի էկզարխ Վլադիմիրը հեռագրով լալանել է Պետերբուրգ առաջ սինողին:

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՄԻԲԵԼԵԱՆ. «Մուրճ»-ի անցեալ № 10 ում, պ. 8. Դադրաշեանի գրախօսական լօղւածի առիթով պ. ՏԷՐ-ՄԻԲԵԼԵԱՆԻ գրքի մասին (Հաւատանաւց եկեղեցի և ալն), մենք ծանօթութեան մէջ պարտք էինք համարել նկատել, թէ պ. Դադրաշեանը ի նկատի է ունեցել պ. ՏԷՐ-ՄԻԲԵԼԵԱՆԻ գրքի միայն գերմաներէն բնագիրը և ոչ նորա հայերէն թարգմանութիւնը. Ալդ ծանօթութիւնը կարեւոր էր ալն պատճառով, որ պ. Դադրաշեանի լօղւածից մենք զէն էինք զցել գրքից առաջ բերած

գերմաներէն կտորները, պահպանելով միայն նոցա հաւերէն թարգմանութիւնը, իսկ ալդ թարգմանութիւնը արեւ էր պ. Դաղբաշեանը ինքը և ոչ թէ վերցրած էր պ. Տէր-Միքեղեանի գրքի հաւերէն հրատարակութիւնից՝ Մեր ալդ ծանօթութիւնը հիմնւած էր պ. Դաղբաշեանի խոստովանութեան վրայ։ Այժմ պ. Տէր-Միքեղեանը «Նոր-Դար»-ում տպած մի գրութեան մէջ կասկածի է ենթարկում մեր վկայութիւնը, հիմնւելով ալն հանգամանքի վրայ, որ իւր գրքի հաւերէն վերնագիրը դրած է գրախօսութեան ճակատին և որ իրա՝ Տէր-Միքեղեանի՝ հաւերէն լեզուից սխալներն օրինակներ են բերւած։

Մեր պատասխանը ալս է. ձեր գրքի հաւերէն վերնագիրը պ. Դաղբաշեանը վերցրել է ոչ թէ ուղղակի ձեր գրքից, ալ «Մուրճ»-ից, ուր ալդ վերնագիրը տպւած էր նոր ստացած գրքերի շարքում (տես «Մուրճ» 1893 թ. № 6, էջ 1030)։ Իսկ ձեր առհնարին լեզուից նմուշներ նա բերել էր ոչ թէ ձեր գրքից, ալ «Արարատ»-ում տպւած լոգւածներից, և ալդ մասին կալ վիշաակութիւն լոգւածի մէջ (տես «Մուրճ» 1893 թ. № 10 էջ 1551, առաջին սխալի վերջին տողը)։

Իսկ գալով պ. Ա. Տէր-Միքեղեանի գրութեանը, որը իբր թէ մի հերքումն պիտի լինէր «Մուրճ»-ում տպւած լոգւածին, նորանից աչքան անախորժ հոտ է բուրում, որ մենք ալժմ աւելի ևս արդարացում ենք պ. Դաղբաշեանի լոգւածի բարձակողական տոնը, որը, սակայն, «Մուրճ»-ում աւելի մեղմ է դուրս եկել քան ձեռագրումն էր։

«ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ» (Кавказское Сельское Хозяйство)
շարաթաթերթը նոյեմբեր ամսից սկսեց հրատարակել բաց կանոնաւոր ընթացք կստանալ մինխտրութիւնից օրինական թուլտութիւն ստանալուց լետու։

«ՄՈՒՐՃ» 1893 թ. №№ 1-ից, 3-ից և 9-ից աւելորդ օրինակներ ունեցողներին խնդրում ենք բարեհաճեն խմբադրութեան ուղարկել փոխարէնը ստանալով «Մուրճ»-ի հրատարակած որ և է մի գիրք։ Մեզ պակասում են լիշեալ համարներից հինգ հատ։

ԹԱՏՐՈՆ ԲԱԳԻՈՒՄ. Ներկալ թւականին մեզանում երկու կաղմակերպւած թատրոնական խմբեր են գործում, որոնցից մէկը Թիֆլիսում միաւր Բաղտամ։ Թիֆլիսի խմբի կաղմակերպութեան մասին արդէն գիտեն մեր ընթերցողները։ Բաղտինը կաղմած է, նման Թիֆլիսին՝ Կ. Պոլսից եկածներից և կովկասցիներից։ Կ. Պոլսից են՝ օր. Վարթիթեր, օր. Մարի-Հրանդէ և պ. Ալեք-

սաննան. տեղացիներից են՝ տ. Փառանձեմ և պ. պ. Սաֆրա-
ղեան, Վլադր. Աւետեան և Մանւէլեանց: Տեղացիներից պ. Սաֆ-
րաղեան և Աւետեանը մշտապէս Բաքու են, իսկ օր. Փառան-
ձեմ և պ. Վլադր. ցաղժմ գործել են Թիֆլիսի զերասանական
խմբի հետ Պր. Մանւէլեանց նոր սկսող է-

† ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՍՏՆԵՐԻՐԿԻ, նախկին իշխան Բուլղարայի, վախճան-
ւեց իբր աւտորական սպաւ. Նորա մարմինը իւր առժամա-
նակեալ դամբարանից տեղափոխուելու և ամփոփուելու է Բուլ-
ղարայի մարաքաղաք Սոֆիայում:

† ԶՈՆ ՏԻՆԴԱԼ, Նորերս վախճանւեց երեւի ֆիզիկոս Տինդալը: Հան-
դուցեալը ծագումով իրլանդացի էր, աղքատ ծնողներից: Իւր
թերի ուսումը նա լրացրեց միայն, երբ 29 տարեկան հասա-
կում 1848 ին Գերմանիա գնաց, ուր լսեց Բունզէնի և Մադ-
նուսի լեկցիաները Բերլինում և Մարբուրգում: Այդտեղ նա
սկսեց իւր գիտական զբաղմունքները մադնիսականութեան,
պոլարիզացիայի և կրիստալո-ֆիզիկայից: Այդ աշխատու-
թիւնները նա վտոյ չալունակեց Անգլիայում, ուր նա զորանով
պրոֆեսորութիւն ստացաւ: Այդ ժամանակից և սկսում է նո-
րա բեղմնաւոր գործունէութիւնը որ շարունակեց մինչ նորա
մահը: Նա անցկացրեց ֆիզիկայի բոլոր լինդիւրներում էներ-
գիայի (ուժի) պահպանութեան սկզբունքը, որ ալժմ բոլոր
գիտնականների կողմից ընդունւած է: Կարևոր են նորա աշխա-
տութիւնները ճառագայթային ջերմութեան մասին, և, Հեքս-
լիի հետ միասին՝ սառցակուտերի բնութեան մասին: Տինդալը
փալեց նաև որպէս դասախօս և ժողովրդականացնող: Նորա
ամուսնը աշխարհահռչակ դառաւ հանրամատչելի դասախօսու-
թիւններով ջերմութեան, ձալնի, լուսի մասին և ալն, որոնք
թարգմանւեցին բոլոր եւրոպական լեզուներով:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 10 պ. Ղ. Աղալեանցի լողածում, էջ 1485—86
տպւած է՝ օրկատի, ուղիղն է՝ օր. քեւտրի:

Պ. Գ. Ղարաջեանի լողածում, էջ 1545, տող 9-րդ պէտք
է կարդալ՝ «եթէ միայն լառաջադիմութիւնը կը մնալ ապագա-
լի համար և ս ն ո չ ն օր է ն քը, ի ն չ պ է ս որ ն ա ե ղ ե լ է
ա ն ց ե ա լ ի հ ա մ ա լ ո» և ալն:

Պրն. Իսաղբաշեանի լողածում, էջ 1551, առաջին սիւ-
նակ, տող 23-երորդ տպւած է՝ կարևոր է. ուղիղն է՝ կարօտ է:

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐԳԵՐ

1) ԿԱՆԱՅԵԱՆՑ, Ստեփան.— Յուցակ հայերէն ձեռագրների Թիֆլիսի Ներ-

սխանան Հոգևոր Դպրանոցի: Թիֆլիս, 1893, տպ. Շարաձէ:

- 2) ՔԱՄԱԼԵԱՆ, Բարսեղ.—Սիրահարը սեղանի տակ (վողեւիլ մէկ արարւածութիւն), Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893, գինն է 20 կ.
- 3) ՍԱՀԱԿՅԱՆՑ, Սահակ քաչ.—Դասագիրք կրօնի. ուղեցոյց հաշ կրօնուսուցների համար Նոր ուխտի նիւթի մշակութիւնը, հատոր Բ. մասն II, տետր Բ. և Գ. Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1893, գինն է 70 կոպ.: